Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 8-ի N 1313 - Ն որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵԿ ԱՇՁԲ-10/8-1/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է Երևանի Մ. Խորենացու 3 հասցեում, հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական փաստաթղթերի (ակցիզային դրոշմանիշերի) տպագրության աշխատանքների ձեռքբերման համար կիրառել է շրջանակային համաձայնագրով իրականացվող գնման ընթացակարգ, որի համաձայն 2011 թվականի հունիսի 20-ին գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում է ուղարկել գնման նախնական պայմանագիր կնքած անձին:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը

Ակցիզային դրոշմանիշերի տպագրական աշխատանքների ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է ենթաակցիզային որոշ ապրանքների պարտադիր դրոշմավորման անհրաժեշտությամբ: Շրջանակային համաձայնագրով իրականացվող գնման ընթացակարգի գնման առարկան բաղկացած էր երկու չափաբաժնից:

Գնման առարկայի ձեռքբերման ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել 2011 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն: Գնման ձևի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշմամբ հաստատված գնումների պլանի համաձայն:

3. Առաջարկ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը

Շրջանակային համաձայնագրով իրականացվող գնման ընթացակարգով գնային առաջարկ է ներկայացրել՝<<ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ Գրուպ>> ՍՊԸ-ն, հասցեն՝ քաղ. Երևան, Չարենցի 25:

4. Մասնակցի կողմից ներկայացված գինը՝ ըստ չափաբաժինների, տվյալներ կնքված պայմանագրի վերաբերյալ

1) ներկայացված գինը

(դրամ)

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Գնի առաջարկը, այդ թվում՝ ԱԱՀ-ն (հազ. հատի համար)	Ավելաց-ված արժեքի հարկը (ԱԱՀ)
1.	<<Ծխախոտ>> տեսակի դրոշմանիշի համար՝ ոչ ինքնասոսնձվող դրոշմանիշ՝ օպտիկական փոփոխական տեսակի պաշտպանիչ ներկով OVI (Optical Variable Inks), լրացուցիչ իդենտիֆիկացիոն հատկանիշով	1650	275
2.	<<Ալկոհոլային խմիչք>> տեսակի 15մմ X 80 մմ չափերի դրոշմանիշի համար՝ ինքնասոսնձվող դրոշմանիշ՝ օպտիկական փոփոխական տեսակի պաշտպանիչ ներկով OVI (Optical Variable Inks), լրացուցիչ իդենտիֆիկացիոն հատկանիշով	7500	1250

2) տվյալներ մերժված առաջարկությունների համար՝

մերժված առաջարկություններ չկան.

3) տվյալներ բանակցությունների վերաբերյալ՝

բանակցություններ չեն վարվել.

4) գնման պայմանագրի կնքման ամսաթիվը, համարը, գնման առարկայի անվանումը, գինը, քանակը և պայմանագրի կատարման վերջնաժամկետը՝

2011 թ. հուլիսի 1-ին պատվիրատու հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի և կապալառու հանդիսացող՝ <<ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ Գրուպ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է <<Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական փաստաթղթերի տպագրության աշխատանքների ձեռքբերման>> գնման պայմանագիր՝ ՊԵԿ ՊԱՇՁԲ-10/8-1/1 ծածկագրով: Պայմանագրի գինը կազմում է 861475950 դրամ:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետն է՝ 2011 թվականի նոյեմբերի 30-ը: Կանխավճար նախատեսված չէ:

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Չափ-ման միա-վորը	Քանակը	Միա-վորի արժեքը (դրամ)	Գինը (հազ. դրամ)
1.	<<Ծխախոտ>> տեսակի դրոշմանիշի համար՝ ոչ ինքնասոսնձվող դրոշմանիշ՝ օպտիկական փոփոխական տեսակի պաշտպանիչ ներկով OVI (Optical Variable Inks), լրացուցիչ իդենտիֆիկացիոն հատկանիշով	1000 հատ	285743	1650	471475.95
2.	<<Ալկոհոլային խմիչք>> տեսակի 15մմ X 80 մմ չափերի դրոշմանիշի համար՝ ինքնասոսնձվող դրոշմանիշ՝ օպտիկական փոփոխական տեսակի պաշտպանիչ ներկով OVI (Optical Variable Inks), լրացուցիչ իդենտիֆիկացիոն հատկանիշով	1000 հատ	52000	7500	390000.00
Ընդամենը					861475.95

5) կապալառուի բանկային և հարկ վճարողի հաշվառման տվյալները՝

<<ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ Գրուպ>> ՍՊԸ, <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ, <<Տիգրան Մեծ>> մ/ճ Հ/Հ 2474900126603312, ՀՎՀՀ 01531784:

5. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները.
դրանց վերաբերյալ ընդունված որոշումները

Անգործության ժամկետ չի հայտարարվել, քանի որ գնման ընթացակարգին մասնակցել է միայն մեկ կազմակերպություն: Գնման գործընթացի ժամանակ բողոքներ չեն ներկայացվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ